

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Ապրիլ 29, 2009

Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցի, Լոս Անճելլոս, Գալիֆորնիա

Հայց. Եկեղեցույ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Հոգեւորականաց Տարեկան Համագումարը փեղի ունեցաւ Ապրիլ 29ին, 2009 Լոս Անճելլոսի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցույ մէջ՝ Նախագահութեամբ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Ս. Յովնան Արքեպիսկոպոս Տէրփէրեանի: Ժողովին ներկայ էին Թեմիս Հոգեւոր Հովիւներէն 45 հոգի եւ Քահանայութեան Թեկնածու Սարկաւագներ: Յառաջացած փարիքի եւ հիւանդութեան պարճառներով ոմանք կը բացակայէին:

Առաւօտեան ժամը 9:00ին փեղի ունեցաւ ժամերգութիւն, որու աւարտին Հոգեհանգստեան Պաշտօն կատարուեցաւ Արեւմտեան Թեմէն ներս պաշտօնավարած հանգուցեալ հոգեւորականներու եւ յարկապէս այս փարուան սկիւբը վախճանած Օգլընտի Սուրբ Վարդան Հայց. Եկեղեցույ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Ս. Մեսրոպ Աւագ Քհնյ. Սարաֆեանի հոգիին համար:

Ծուխին Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Ս. Արշակ Աւագ Քհնյ. Խաչատուրեան եկեղեցականներուն ծանօթացուց Տիկնանց Միութեան Տիկիները՝ Արեւնապետութեամբ Տիկին Լուսիլը Պողոսեանի, որոնք ծրագրուած համագումարներու ընթացքին պիտի հիւրընկալէին բոլոր պատգամաւորները: Ապա Սրբազան Հայրը իր գնահատական խօսքը ուղղեց Տիկիներուն եւ շնորհակալութիւն յայտնեց անոնց, որ սիրայօժար կերպով պատրաստ էին հիւրասիրելու չորս օրերու ընթացքին:

Արարողութենէն ետք Եկեղեցույ Կոկեան Սրահին մէջ փեղի ունեցաւ նախաճաշ: Ժամը 10:00ին Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Ս. Յովնան Արք. Տէրփէրեանի Նախագահութեամբ Եկեղեցույ Տիւկերեան Սրահին մէջ սկսաւ ժողովը, որուն ներկայ էր նաեւ Գերշ. Ս. Վաչէ Արք. Յովսէփեան: Ուրախ ենք յայտնելու, թէ ընդառաջելով Առաջնորդ Սրբազան Հօր խնդրանքին, համագումարներուն մասնակցելու համար Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամեայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռէն Արեւմտեան Թեմ ղրկած էր Հոգշ. Ս. Պարթեւ Աբեղայ Բարսեղեանը եւ Արժ. Ս. Արամ Քհնյ. Միրպոյեանը:

Առաջնորդ Սրբազան Հօր բացման աղօթքէն ետք Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Ս. Տաճար Ծ. Վրդ. Եարպըմեան Առաքելական Թուղթէն հափուած մը կարդաց, որուն յաջորդեց Աւետարանի ընթեցումը Արժ. Դոկտ. Ս. Զաւէն Աւագ Քհնյ. Արպումանեանի կողմէ:

Հոգշ. Ս. Պարթեւ Աբեղայ Բարսեղեան կարդաց Ամեայն Հայոց Կաթողիկոսին պատգամը, որուն մէջ Նորին Սրբութիւնը կը գրէր. «Փառք ենք մատուցում Բարձրեալին, որ Իր խնամքի ներքոյ առաջնորդում է Ամերիկայի Միացեալ Նահանգաց Հայոց Արեւմտեան Թեմի փերունապատուէր առաքելութիւնը: Նուիրեալ հոգեւորականներ ու երախտարաժան հայորդիներ իրենց փեսիքով, աստուածասէր ծառայութիւններով, ընծայաբերումներով ու բարեգործութիւններով փաստամեակների ընթացքին պօրացրեցին ու շէնացրեցին Տիրախնամ թեմը՝ նպաստելով մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանն ու արդիւնաւոր գործունէութեանը Միացեալ Նահանգներուն: Գոհունակութիւն է Մեր հոգում, որ վերջին փարիներին Ձեր նախանձախնդրութիւններով ու Ձեր քաջալերանքով իրականացուող աստուածահաճոյ գործերով նոր յաջողութիւններ են արձանագրուում թեմական կեանքում՝ ի փառս Աստուծոյ եւ ի բարօրութիւն Քրիստոսասէր մեր ժողովրդի: Եւ զամենայն զոր եւ առնիցէք բանիւք եւ արդեամբք, զամենայն յանուն Տեառն Յիսուսի արասջիք: Գոհացողք լինիջիք զԱստուծոյ եւ զՀօրէ նովաւ» (Կող. 3:17):

Առաջնորդ Սրբազան Հայրը բարի գալուստ մաղթեց հոգեւորականներուն, ապա փուաւ իր հետեւեալ պատգամը:

«Քանզի ամենայն մարմին իբրեւ զխոտ է, եւ ամենայն փառք մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ. խոտն ցամաքեցաւ եւ ծաղիկն թօթափեցաւ. եւ բան Տեառն մնայ յաւիտեան, այսինքն է բանն որ ձեզ աւերարանեցաւ» (Ա. Պետրոս 1:24-25):

Սիրեցեալ Հոգեւոր Եղբայրներ ի Քրիստոս,

Հոգեւորականաց այս ժողովին առաջնորդող միտքը ուլեցինք դարձնել Պետրոս Առաքեալի այս խօսքը, որովհետեւ յստակօրէն մեզի կը պարզամէ այս մասին, որ Աստուծոյ խօսքն է յաւիտեանականը, ճշմարիտը, որ աւերարանուեցաւ մեզի առաջին հերթին Քրիստոսի կողմէ: Մեր ալ կեանքի ընթացքը մնայունօրէն կը հաստատենք Աստուծոյ խօսքին քարոզչութեան վրայ, այն քաջ համոզումով, որ Աստուծոյ Խօսքը մեր հաւատքի գիտակցութեան մէջ կը պարզացնէ այն հիմնական մտածումը, որ մեզմէ հեռու վանենք մարմնականին կամ նիւթեղէնին հանդէպ մեր պաշտամունքը եւ հետամուտ ըլլանք հոգեւորին, որուն ճանապարհն ալ մեր իսկ կեանքի ճանապարհն է: Մեր աղօթահաւաքները ուրիշ բան չեն կրնար ըլլալ քան այն, որ որպէս հոգեւոր եղբայրներ եւ սպասաւորներ ի Քրիստոս, քով քովի գալով մեր անհատական եւ հաւաքական կեանքին մէջ զօրացնենք սէրը՝ Աստուծոյ հանդէպ, սէրը՝ մարդկութեան նկատմամբ, որոնք պէտք է դրսեւորուին ծառայութեամբ, գործնականօրէն առօրեայ մեր կեանքի ընթացքին: Անտարակոյս, մենք բոլորս ալ հաւասարօրէն պէտք ունինք հոգեւոր նորոգութեան՝ կորուելով մեր առօրեայէն՝ աղօթքի կեանքով Աստուծոյ ներկայութեան մէջ, մեր մէջ ամրացնելու համար հիմնական առաքելութիւն մը, որն է Աստուծոյ խօսքին քարոզչութիւնը:

Սիրելի հոգեւոր եղբայրներ, կ'ապրինք աշխարհի մը մէջ, որ մարդիկ ամէն վայրկեան մարմնաւոր եւ հոգեւոր արժէքներու երկնայորանքին առջեւ յաճախ շփոթի մարնուած են: Ահաւասիկ ճիշտ այդ պահուն է, որ հոգեւորականին նուիրական պարտականութիւնն է ուղղել հաւատացեալը, Աստուծոյ սրբեղծածը դէպի յաւիտեանականը՝ դէպի Աստուծոյ խօսքը, հեռու պահելով նոյն մաղը մարմնաւորէն, որ խոտին նման պիտի ցամքի եւ վերջապէս օդը ցնդի:

Եթէ ուլենք աւելի կեդրոնանալ Պետրոս Առաքեալի խօսքին վրայ, ապա պիտի ըմբռնենք, որ Առաքեալին պարզամը կը միտի մեր մէջ խորացնել Աստուծոյ սէրը, որովհետեւ այդ է յաւիտեանականը եւ Աստուծոյ սիրոյն առաջնորդութեամբ մենք մեր մէջ կը գտնենք նաեւ մեր ճշմարիտ ինքնութիւնը: Քրիստոնեայ Եկեղեցւոյ նորագոյն Հայրերէն Henry J. M. Nouwen շատ գեղեցիկ կերպով կը բանաձեւէ այս նոյն խօսքը հետեւեալ բառերով. "The measure of our identities or our being is the amount of our love for God. The more we love earthly things, reputation, importance, case, success and pleasure for ourselves, the less we love God (Encounters With Thomas Merton): Հետեւաբար, մեր ինքնութիւնը կը հաստատուի միայն Աստուծոյ հանդէպ մեր ունեցած սիրոյ տարողութեամբ, որ կը մերժէ մարմնաւորն ու ժամանակաւորը՝ համոզում մը, որ Քրիստոս ինք պարզամած է ըսելով. «Հոգի առաւել է քան զմարմին»:

Աստուծոյ խօսքը եւ Աստուծոյ սէրը պիտի դարձնենք առանցքը մեր հոգեւոր կեանքին, որպէսզի մեր կեանքը դարձնենք նաեւ բարի միջոցը՝ մեզի վստահուած ժողովուրդը մօտեցնելու դէպի Աստուծոյ, մշակելու անոնց հոգեւոր կեանքը եւ հաւաքականութիւնները վերածելու գեղեցիկ եւ Աստուծոյ աչքին հաճելի եւ ընդունելի համայնքներու: Որովհետեւ քահանան, մենք մեր քահանայութեամբ միջնորդներ ենք մեր ժողովուրդին՝ Աստուծոյ մօտ: Երբ կը լսենք Պետրոս Առաքեալին խօսքը, թէ «*Բան Տեառն մնայ յաւիտեան, այսինքն է բանն որ ի ձեզ աւերարանեցաւ*», ապա Աստուծոյ խօսքը, որ իր մէջ կը խտացնէ աւերարաններուն ամբողջութիւնը, պարտ ենք դարձնելու նաեւ մեր կեանքի ճանապարհը, նոյնպէս մեզի վստահուած ժողովուրդին կեանքին ճանապարհն ու ուղին:

Ֆրէզնոյի Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւր՝ Արժ. Տ. Արշէն Աւագ Բնյ. Այվապեան սքանչելի կերպով ներկայացուց *«Հայաստանեայց Ուղղափառ*

Եկեղեցւոյ Աստուածաշունչի Կանոնը» ընդարձակ նիւթը՝ բաղդարականը կատարելով հայերէնով եւ անգլերէնով տպուած կարգ մը Սուրբ Գիրքի հրատարակութիւններու:

Իր բանախօսութենէն կ'արտագրենք հետեւեալ մասը, որ օգտակար պիտի հանդիսանայ մեր հաւատացեալներուն:

Նոր Կրակարանի 27 գիրքերէն բոլորը Ճաշոց Գրքին մէջ կը կարդացուին ամբողջութեամբ բացի երկուքէն՝ Պօղոս Առաքեալ Առ Փիլիմոն Թուղթը եւ Յովհաննու Յայտնութեան գիրքը:

Սուրբ Գրական հատուածներու կարգին Ճաշոց Գրքին մէջ մուտք գրած են Եկեղեցւոյ Հայրերու կարգ մը ճառերն ու աղօթքները մասնաւոր փոներու եւ ծիսական կարգաւորութեանց մէջ: Ահաւասիկ անոնց ցանկը:

Սուրբ Յովհաննէս Վարդապետ Պոլսկ՝ Խրատ-Աւագ Հինգշաբթի (Ուրնլուայ): Սուրբ Ներսէս Լամբրոնացի՝ Աղօթք-Հոգեգալստեան Տօնին: Սուրբ Եղիշէ Վարդապետ՝ Աղօթք-Այլակերպութեան Տօնին: Սուրբ Ներսէս Շնորհալի՝ Աղօթք՝ Սուրբ Աստուածածնայ Վերափոխման Տօնին (Խաղողօրհնէք): Սուրբ Բարսեղ Կեսարացի՝ Ճառ-Աստուածայայտնութեան Տօնին (Ջրօրհնէք), Աղօթք-Աւագ Հինգշաբթի (Կարգ Ապաշխարողաց), Ճառ-Աւագ Հինգշաբթի (Վասն Հաղորդութեան) եւ Աղօթք-Այլակերպութեան Տօնին:

Առաջնորդ Սրբապան Հայրը խորապէս գնահատեց Տէր Արշէնին ներկայացուցած նիւթը: Տեղի ունեցաւ հարց ու պատասխանի պահ մը: Որոշուեցաւ, որ Տէր Հայրը իր նիւթը Հայերէնով եւ Անգլերէնով փոքր գրքոյկի մը վերածէր, որպէսզի կարենայինք տպուած ձեւով ունենալ եւ բաժնել նաեւ հաւատացեալներուն: Թելադրուեցաւ նաեւ «կայքէջի» վրայ դնել (website):

Հոգեւոր Հովիւներ յաջորդաբար տեղեկութիւններ տուին իրենց Ծուխերուն արձանագրած յաջողութիւններուն, ապագայ ծրագիրներուն եւ դիմագրուած դժուարութիւններու մասին: Տեղի ունեցաւ կարծիքներու փոխանակութիւններ եւ կատարուեցան թելադրութիւններ:

Առաջնորդարանի Երիտասարդաց Վարիչ՝ Արժ. Տ. Աւերիս Քինյ. Արովեան հանգամանօրէն խօսեցաւ Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան ապագայ գլխաւոր երկու ձեռնարկներու մասին, որոնք են Համագումար՝ Յիշատակութեան Օրուան (Memorial Day) եւ Ամառնային Ճամբարի մասին: Տէր Հայրը պատասխանեց տրուած հարցումներուն:

Առաջնորդ Սրբապան Հայրը ուրախութեամբ յայտնեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ կը շարունակուի երիտասարդ քահանաներու ձեռնադրութիւնը, նոր եկեղեցիներ կը կառուցուին եւ կամ կը վերանորոգուին Վեհափառ Հայրապետի օջախներով: Ապա հրաւիրեց Հոգշ. Տ. Պարթեւ Աբեղայ Բարսեղեանը, որ խօսեցաւ Մայր Աթոռի գործունէութեանց մասին: Հայր Սուրբը խօսեցաւ Սուրբ Էջմիածնի հոգեւոր առաքելութեան մասին, յայտնելով, որ Գէորգեան եւ Վազգէնեան Ճեմարաններուն մէջ 180 պատանիներ-երիտասարդներ կ'ուսանին եւ կը պատրաստուին քահանայութեան: Հայաստանի մէջ կը ծառայէին աւելի քան 170 հոգեւորականներ: Յայտնեց, որ կրօնական բովանդակութեամբ խորասլիկներ (CD) կը պատրաստուին, Շողակաթ Հեռուստարձկերութիւնը օժտուած է նոր շէնքով, որուն օրհնութիւնը կատարած էր Վեհափառ Հայրապետը: Խօսեցաւ նաեւ Մայր Աթոռի կողմէ կատարուած մեծ թիւով հրատարակութիւններու մասին: Հայր Սուրբը հանգամանօրէն անդրադարձաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Պետութեան հետ փոխ յարաբերութեան մասին՝ շեշտելով, որ գոյութիւն ունեցած «Խղճի Ապատութեան Օրէնք»ին մէջ բարեփոխումներ կատարուած էին:

Ապա Արժ. Տ. Արամ Քինյ. Միրզոյեան, որ երկու տարի առաջ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարին մէջ Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի ձեռամբ Քահանայ ձեռնադրուած էր, ինք եւս շահեկան տեղեկութիւններ տուաւ եւ յայտնեց, թէ վերջին տարիներուն Հայաստանի մէջ 63 եկեղեցիներ

կառուցուած եւ կամ վերանորոգուած էին Վեհափառ Հայրապետի վերահսկողութեամբ:

Սրբազան Հայրը գնահատեց հիւր հոգեւորականներուն փոխանցած տեղեկութիւնները եւ Հոգեւորականաց Համագումարի անունով իր որդիական սէրն ու հաւատարմութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին, ինչպէս նաեւ երախտագիտութիւնը, որ երիտասարդ այս երկու հոգեւորականները ղրկած էր Արեւմտեան Թեմ:

Նկարի ունենալով, որ Առաջնորդ Սրբազան Հօր Տարեկան Տեղեկագիրը տպուած էր, որ բաժնուեցաւ հոգեւորականներուն, հակիրճ տեղեկութիւններ հա-ղորդեց եւ գնահատեց բոլորին հոգեւոր ծառայութիւնը, օրհնեց վիրենք եւ յարատեւ յաջողութիւն մաղթեց:

Այս տարի կ'աւարտի Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի պաշտօնավարութեան վեցերորդ տարին: Թեմիս Կանոնադրութեան համաձայն Մայիս 1ին եւ կամ 2ին, Թեմական 82րդ Պատգամաւորական Ժողովի ընթացքին քուէարկութեամբ պիտի որոշուի իր երկրորդ եօթնամեայ պաշտօնավարութեան շրջանը որպէս Առաջնորդ Արեւմտեան Թեմին:

Այս ուղղութեամբ Արժ. Տ. Արշակ Աւագ Քհնյ. Խաչատուրեան բանաձեւ մը կարդաց, որ ընդունուեցաւ Հոգեւորականաց Համագումարի կողմէ, կոչ ուղղելով Պատգամաւորներուն, որ ի նպաստ Սրբազան Հօր նոր պաշտօնավարութեան շրջանին քուէարկէին:

Փակման խօսքը կատարեց Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, որ շեշտեց հոգեւոր ծառայութեան եւ առաքելութեան կարեւորութիւնը, յիշելով Քրիստոսի խօսքը, որ հոգեւոր ծառայութեան կոչեց Առաքեալները եւ իր Համբարձումէն առաջ, անոնց իշխանութիւն տուաւ աշակերտ դարձնելու բոլոր հեթանոսները եւ տարածելու Աւետարանին լոյսը:

Երեկոյեան ժամերգութենէն ետք, Առաջնորդ Սրբազան Հօր աղօթքով վերջ գրաւ Հոգեւորականաց Տարեկան Համագումարը: